206.5
Ч-93

1006

h

ՎԱՆԱԿԱՆ

2012

2012

206.5
Ս-93

ՀԱՇԻՒ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1912 Թ.

2012

06.5
-93

НАХИЧЕВАНЬ Н-Д.
Тип. С. Я. Авакова.

Ն.-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպ. Ս. Յ. Աւագեանի.

1913

Y-5 W91

W 100
206.5
G-93
W6
1441
370
2072-ՀԱ

Նոր-Նախիջևանի ս. Խաչ Վանքի Վանական Կառավարութիւնը՝ բոլորելով իւր գործունէութեան հինգերորդ տարեշրջանը, կանոնադրութեան 11-րդ յօդուածի համաձայն՝ պատիւ ունի ներկայացնելու պատգամաւորական ընդհանուր ժողովի քննութեանն ու հաստատութեանը 1912 թուի ԵԼ և ՄՈՒՏՔԻ ու գործունէութեան հաշիւը. այլ և կանոնադրութեան 10-րդ յօդուածի համաձայն՝ առաջիկայ 1913 թուի ելլ և մուտքի մօտաւոր նախահաշիւը։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Инвент. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՒՏՔ ՀԱՇԻՒ 1912 Թ. ԵԼՔ

		Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
I.	Մնացորդ առ 1-ն Յունուարի 1912 թ. Տասնը-վեց հազար քառասնօրը ռուբլի քառասուն կոպէկ որ կազմուած է հետեւեալ գումարներից.				
1 ա.	Պահեստի գումար նախկին տարիների . .	3501	91		
բ.	Պահեստի գումար 1911 թ. . . .	1450	50		
2 ա.	Հիմնական նորոգութեան ֆոնդ նախկին տարիների	3501	91		
բ.	Հիմնական նորոգութեան ֆոնդ 1911 թ. . .	1450	50		
3	Միք. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների նորոգութեան համար յատկացրած անձեռնմխելի գումարը 1911 թ. %-ով . . .	561	81		
4	Ծախսելի գումար	5560	65	16027	28
II.	Հաշուեւութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը մուտք ունեցել է Տասնհինգ հազար հարիւր հինգ ռուբլի տասն եւ չորս կոպէկ հետեւեալ աղբիւրներից.				
1	Վաճառականներից (1911 թ. բ. կիսամեակի և 1912 թ. ա. կիսամեակի)	6964	24		
2	Անվար հողերից (բուրեանից և ժնիվայից) . .	2167	76		
3	Տնկարանից (33 դես. 240 ք. ս.) . . .	1020	—		
4	Քարահանքից (1911 թ. բ. կիսամեակի և 1912 թ. ա. կիսամեակի)	1050	—		
5	Բանջարանոցից	162	50		
6	Պարտէզի վարձ	600	—		
7	Պարտէզի կապալառու պ. Մ. Քայալեանցի 'ի հաշիւ պարտքի	400	—		
8	Ամբարանոցներից	780	—		
9	Ամբարանոցներից (1911 թ. մնացած ապառիկներ)	180	—		
10	Մոմի արդիւնք (կոճառով)	764	42		
11	Եկեղեցու և երգիչների դանձանակներից . .	28	85		
12	Այլ և այլ եկեղեցական նուէրներ . . .	54	95		
13	Այլ և այլ նիւթերի վաճառումից (մոլթինների, անասունների, գեանախնձորի, փայտեղէնի, սառոյցի, հին տան, հին խոտի, զոդամի և այլն .	413	04		
14	Դրամատներից %% 1911 թ.	523	39	15109	15
	Ընդամենը. .	—	—	31136	43

		Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
I.	Հաշուեւութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը ելք է ունեցել տասը հազար հարիւր քառասուն ռուբլի ութսուն մէկ կոպէկ.				
1	Վանահօր ռոճիկ	600	—		
2	Տնտես-տիրացուի ռոճիկ և տօնական նուէրներ .	510	—		
3	Երգիչներին տօների առթիւ նուէրներ . .	158	10		
4	Ծառայողների ռոճիկներ (պարտիզպանի, կառապանի, խոհարարի, դռնապանի, գիշերապահի և դորուչու)	1148	50		
5	Եկեղեցու և շէնքերի պահպանութեան ու նորոգութեան	805	74		
6	Մոմի ու խնկի	291	—		
7	Վառելիքի ու լուսաւորութեան	307	59		
8	Տարեկան սնունդ վանահօր, պաշտօնեաների, ծառաների և հիւրերի ծախք	1003	52		
9	Անասունների կեր	781	70		
10	Սեղանի և խոհանոցի սարքի ու կարասիքի .	94	56		
11	Նոր կառքի, կարկատանների և ձիերի պայտելու	191	13		
12	Պարտէզի ընդհանուր մշակութեան և ծաղկոցների	256	55		
13	Սառոյցի	33	—		
14	Այլ և այլք (օճառ, պոստ և հեռագիր, նպաստ աղքատաց, ժապաւինեալ մատեան և այլն) . .	140	33		
15	Կալուածական ծախքեր (շէնքերի ապահովագրութեան, կալուածական հարկի, յայտարարութիւնների և այլն)	159	90		
16	Հեռախօսի	79	64		
17	Վանական կառավարութեան ծախք (ծառայի, կառքի և թէյի)	71	95		
18	Ազգիս Վեհափառ Հայրապետի ընդունելութեան ծախք	107	60		
19	Ռուսաստանի սովեալների օգտին պ. Քաղաքապետի միջոցով	100	—		
20	Արհեստաւորաց դպրոցին	500	—		
21	Նոր-Նախիջեւանի Հայոց Հոգեւոր Թեմական դպրանոցին	3500	—	10840	81
22	Մնացորդ առ 1-ն Յունուարի 1913 թ. (որի մէջ է նաև 1912 թ. պահեստի և հիմնական նորոգութեան 3021 ռ. 82 կոպէկը) . . .	—	—	20295	62
	Ընդամենը. .	—	—	31136	43

	Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
Փոխանցեալ . .	—	—	31136	43
	—	—	31136	43

Նախագահ վանական կառավարութեան՝
Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան

Գործավար-անդամ՝ Գէորգ սարկ. Զէօրէքչեան

1913 թուի մարտի 29-ին մենք՝ ներքոյ ստորագրեալ հաշուեքննիչներս քննեցինք ու մտից հաշիւը և գտանք, որ հաշուամատեանները վարած են ճիշտ և գումարները ունին իրենց ապացուցագրերը, միայն որ ցանկալի էր նախ՝ ստացել են փողերը և ոչ թէ ստորագրէ վանքի տնտեսը՝ Գար. Տէր-Մինասեանը Յունուարի 1913 թ. մնացորդն է իսկ հազար երկու հարիւր ինսուն հինգ ընկերութեան մօտ ընթացական հաշուով գտնուում է վեց հազար վեց հարիւր ընկերութեան մօտ ընթացիկ հաշուով Տասներեք հազար հարիւր տասնութը թեան մօտ ընթացիկ հաշուով Միք. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի (561 ր.) 81 կոպ., իսկ մնացեալ երկու ռուբլի

Հաշուատեսներ

	Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
Փոխանցեալ . .	—	—	31136	43
	—	—	31136	43

Անդամներ Վ. Կ.
Յովհաննէս Շապոշնիկեան
Աբգար Դերիջանեան
Յովակիմ Սագիրեան

ցինք Վանական Կառավարութեան հաշուամատեանները և 1912 թ. տարեկան կանոնաւոր, բոլոր մուտքերը եղած են համաձայն պայմանագրերի, ծախսուած ծախսերի վաւերագրերն ու հաշիւներն ստորագրէին այն անձինք, որոնք և եկրորդ՝ իւրաքանչիւր առարկայ ունենայ իւր առանձին հաշիւը։ Առ 1-ն ռուբլի (20295 ր.) 62 կոպ., որից Ռոստով-Նախիջևանի փոխադարձ Վարկի տասներեք ռուբլի (6613 ր.) 7 կոպ., Նոր-Նախիջևանի փոխադարձ Վարկի ռուբլի (13118 ր.) 52 կոպ., Ռոստովի երկրորդ փոխադարձ Վարկի ընկերուարձանների պահպանութեան գումարը հինգ հարիւր վաթսուն մէկ ռուբլի (2 ր.) 22 կոպէկը գտնուում է առձեռն վանահօր մօտ։

Ս. Զաթալբաշեան
Մ. Ալլահվերդեան

ՄՈՒՏՔ — ԵԱԽԱՀԱ

		Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
I.	Մնացորդ առ 1-ն Յունուարի 1913 թ. . .	—	—	20295	62
II.	1913 թ. ընթացքում ս. Խաչ վանքը մուտք պիտի ունենայ մօտաւորապէս Տասնը վեց հազար ինը հարիւր քսաներկու ռուբլի յիսուն չորս կոպէկ հետեւեալ աղբիւրներից				
1	1912 թ. աճրդով տրուած 265 դես. 1264 ք. ս. վարելահողի ը. կիսամեակի վարձը (մինչև սեպտ. 1-ը 1913 թ.) . . .	4050	45		
2	1913 թուին վարձու տրուելիք 231 դես. 1338 ք. ս. վարելահողի առաջին կիսամեակի վարձը (1913 սեպտեմբերի 1-ից մինչև տարեվերջը) .	3465			
3	Աբօտաեղինների վարձը (200 դես. բուրեանի և ժնիվայի)	1700			
4	Տնկարանի վարձ „Ռամ“ վաճառականական տընից (33 դես.)	1270			
5	Ստեփան Ակսեօնովից (10 դես. հողի վարձ) .	150			
6	Ստեփան Ակսեօնովից 1912 թուի համար . .	150			
7	Բանջարանոցից	475			
8	Բանջարանոցից (1912 թուից մնացած) . .	200			
9	Քարահանքի տարեկան վարձ	1500			
10	Քարահանքից (1912 թուից մնացած ստանալիք, որ մտել է 1913 թ. յունուարի մէջ) . .	450			
11	Պարտէզի տարեկան վարձ . . .	600			
12	Պարտէզի կապալառու պ. Մարգար Բայալեանից 'ի հաշիւ պարտքի	500			
13	Ամարանոցներից	780			
14	Մոմի արդիւնք	800			
15	Այլ և այլք	150			
16	Դրամագլխի % % 1912 թ.	682	09	16922	54
	Ընդամենը .	—	—	37218	16

Նախագահ Վ. Կ.

Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան

Վ. Կ. Անդամներ | Յովհաննէս Շապշնիկեան
Աբգար Դերիջանեան
Յովակիմ Սագիրեան

Գործավար-անդամ՝ Գ. սարկ. Զէօրէքչեան

ՇԻՒ — ԵԼՔ 1913 թ.

		Ռուբ.	Կ.	Ռուբ.	Կ.
I.	1913 թուի ընթացքում ս. Խաչ վանքը ելք պիտի ունենայ մօտաւորապէս քսան մէկ հազար չորս հարիւր քսան եօթը ռուբլի.				
1	Վանահօր ռոճիկ	900	—		
2	Տնտես-տիրացուի ռոճիկ տօնական նուէրներով .	500	—		
3	Երգիչներին նուէրներ տօների առթիւ . .	150	—		
4	Ծառաների ռոճիկներ (պարտիզպանի, կառապանի, խոհարարի, դռնապանի, գիշերապահի և դրուչչու)	1148	—		
5	Մոմի և խնկի	290	—		
6	Վառելիքի ու լուսաւորութեան	300	—		
7	Տարեկան սնունդ վանահօր, սպասաւորների և հիւրերի ծախք	1000	—		
8	Անասունների կեր	700	—		
9	Կարասիքի և սեղանի ու խոհանոցի սարքի .	100	—		
10	Կառքերի նորոգութեան և ձիերի պայտելու .	100	—		
11	Պարտէզի ընդհանուր մշակութեան և ծաղկոցների	400	—		
12	Սառոյցի	35	—		
13	Այլ և այլք	140	—		
14	Կալուածական ծախքեր (շէնքերի ապահովագրութեան, կալուածական հարկի, յայտարարութիւնների և այլն)	250	—		
15	Հեռախօսի	160	—		
16	Վանական կառավարութեան ծախք . . .	70	—		
17	Նոր-Նախիջևանի Հայոց Հոգևոր Թեմական դպրանոցին նպաստ	3500	—		
18	Արհեստաւորաց դպրոցին նպաստ (մի տարով) .	500	—		
19	Տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յոբելեանական տօների յաւերժացման համար Ամենայն Հայոց Հայրապետի հաստատած կազմուելիք դպրոցական ֆոնդին (միանուագ)	1000	—		
20	Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանին նպաստ (տարեկան)	500	—		
21	Եկեղեցու և պատերի նորոգութեան . . .	1500	—		
22	Պահեստի գումար տարեկան (եկամուտի 10%-ը)	1692	—		
23	Հիմնական նորոգութեան ֆոնդ (տարեկան եկամուտի 10%-ը)	1692	—		
24	Անասունների համար կառուցուած շէնքի յարդարման ծախք	800	—		
25	Սանդուղքի շինութեան	4000	—	21427	—
	Ընդամենը .	—	—	21427	—

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1912 ԹՈՒԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Վանական Կառավարութիւնը՝ ներկայացնելով ծխական-պատգամաւորական ընդհանուր ժողովիդ 1912 թուի հաշիւը և 1913 թուի նախահաշիւը, կարևոր է համարում յարակցել նաև սոյն համառօտ տեղեկագիրը՝ իբրև պարզաբանութիւն հաշուի և նախահաշուի:

Վանական Կառավարութիւնը առաջնորդուելով ս. Խաչ վանքի Կառավարութեան համար ժամանակաւորապէս հաստատուած կանոնադրութեամբ իւր էական պարտքն է համարել կառավարել Վանքապատկան կալուածները, հոգ տանել նոցա արդիւնաբերութեան մասին և բարեկարգ վիճակի մէջ պահել թէ կալուածները և թէ վանքը: Այս նպատակով Վ. Կ. 1912 թուի ընթացքում ունեցել է 7 նիստ, ուր՝ բացի ընթացիկ գործերի կարգաւորութիւնից և եկամուտքի ամսական հաշուեքննութիւնից, խորհրդածութեան առարկայ են դարձել եղած կալուածների արդիւնաւոր շահագործութեան վերաբերեալ բազմաթիւ հարցեր, առաջարկուել են վանքի ընդհանուր բարեկարգման և եկամուտի նոր աղբիւրներ ստեղծելու ծրագրներ, որոնք սակայն Վ. Կառավարութիւնից անկախ պատճառներով մինչև օրս իրագործուած չեն:

Վանական Կառավարութեան գործունէութեան իսկական պատկերը տալու համար՝ կարևոր էր մի առ մի թուել վանքի եկամտի բոլոր աղբիւրները և նկարագրել նոցա շահագործութեան եղանակը: Սակայն 'ի նկատի առնելով որ Վ. Կ. ներկայ կազմը՝ իւր նախընթաց տարիների տեղեկագրերի մէջ արդէն քանիցս առիթ ունեցել է լուսաբանելու յիշեալ խնդիրները՝ աւելորդ համարելով նոյնը կրկնել՝ կանցնի հաշուի և նախահաշուի մի քանի յօդուածների բացատրութեան:

Վանական Կառավարութեան 1912 թուի հաշուապատկերի մէջ դիտելի է, որ քարահանքից այս տարի ստացուել է 1050 ռուբլի, այն ինչ քարահանքը, ինչպէս յայտնի է, անցեալ տարուանից տրուած է տարեկան 1500 ռուբլով և երեք տարի ժամանակով: Այս թիւրիմացութիւն չէ, այլ մեկնւում է նրանով, որ 1912 թուի առաջին կիսամեակի 750 ռուբլուց կապալառուն ներմուծել է միայն 300 ռուբլին, իսկ մնացեալ 450 ռուբլին ներմուծել է 1913 թուին և պիտի մանի 1913 թուի հաշուի մէջ, որ երևում է նախահաշուից:

Հետաքրքրող աչքը դիտած կլինի նաև, որ 1912 թուին բանջարանոցից ստացուել է միայն 162 ռուբլի 50 կոպէկ՝ փոխանակ 400 ռուբլու: Այս ևս բացատրւում է նրանով, որ տարեկան վարձը երկանուագ է ներմուծւում՝ մէկը մարտին, միւսը՝ հոկտեմբերին. վերոյիշեալ գումարը վանքի անվճար առած 37 ռ. 50 կոպէկի բանջարեղէնով կազմում է մարտի ներմուծանելիքը. իսկ ինչ կվերաբերի հոկտեմբերի ներմուծման, կապալառուն՝ Բալկանեան պատերազմի պատճառով ստիպուած լինելով հայրենիք դառնալ, անկարող է եղել 1912 թուի հոկտեմբերին ներմուծանելիք 200 ռուբլին ժամանակին ներմուծել՝ և խոստացել ու գրաւոր խոստանում է վերադարձից յետոյ մարտին ներմուծանելի գումարի հետ միասին ներմուծել: Գալով այն խնդրին՝ թէ ինչու համար 1912 թուի կապալավարձը փոխանակ 475 ռուբլու հաշուած է 400 ռ. պէտք է նկատել, որ Վ. Կ՝ նախանցեալ տարուայ ոչ սովորական հեղեղների պատճառով բանջարանոցի կապալառուի կրած զգալի վնասը 'ի նկատի առնելով՝ յարգեց նրա խնդիրը և որոշեց 1912 թուի վարձը 75 ռուբլի պակասեցնել:

Անցնելով նախահաշուին՝ Վ. Կ. կհրաւիրէ Պատգամաւորական Ժողովի ուշադրութիւնը յատկապէս մուտքի 11-րդ և 12-րդ յօդուածների վերայ, որ վերաբերում է պարտէզի կապալատուութեան: Թէև 1912 թ. ապրիլի 8-ին գումարուած ծխական պատգամաւորական ժողովը որոշել էր վանքի պարտէզը հէնց առաջիկայ տարուանից վարձու տալ այնպէս, ինչպէս քաղաքը վարձու է տալիս անկարանն ու անտառը, բայց Վ. Կ. անկարող էր գործադրել 1913 թուից, 'ի նկատի առնելով իւր նօտարական գրաւոր պայմանը:

Վանական Կառավարութեան կազմած 1913 թ. նախահաշուի մէջ դիտելի են նաև 19-րդ և 20-րդ յօդուածները: Վ. Կ՝ գիտակցելով Հայրապետական սրբատառ Կոնդակով հաստատուած դպրոցական ֆոնդի կարևորութիւնը, 19-րդ յօդուածով յատկացրել է յիշեալ ֆոնդին միանուագ 1000 ռուբլի, իսկ 20-րդ յօդուածով սահմանել է ս. Էջմիածնի Գէորգեան հոգևոր Ճեմարանին տարեկան 500 ռուբլի՝ 'ի նկատի առնելով այդ հաստատութեան մեծ կարիքը, նրա ընդհանուր ազգային ընտաւորութիւնը և նրա մատուցած ու մատուցանելիք մեծ ծառայութիւնը: Վ. Կ. կատարելապէս հաւատացած լինելով՝ թէ իւր այս որոշմամբ կարող էր միայն Պատգամաւորական Ժողովի մտքերի և զգացմունքների արտայայտողը համարուել և նրա խրախուսանքին արժանանալ՝ վրատահութիւն առաւ այս մասին հաղորդել Նորին Վեհափառութեանը՝ յարակցելով որ դրամի առաքումը տեղի կունենայ՝ երբ Պատգամաւորական Ժողովը ընդունէ նախահաշիւը: Ուշադրութեան արժանի է նաև 26-րդ յօդուածը, որ վերաբերում է սանդուխքի կառուցմանը: Այս խնդիրը հին է և մտել էր անցեալ տարուայ նախահաշուի մէջ և Պատգամաւորական Ժողովից ընդունուել, որ դժբաղդաբար Վ. Կառավարութիւնից անկախ պատճառով անկարելի եղաւ 'ի կատար ածել, բայց որի շինութեանը արդէն ձեռնարկուած է:

Հին է նաև 25-րդ յօդուածը, որ վերաբերում է վանքի զանազան տնտեսական պէտքերին ծառայելու համար կառուցուած շէնքի յարդարմանը: Այդ շէնքը վեց տարի սրանից առաջ կառուցուած է եղել, բայց իւր անյարմար տեղադրութեան պատճառով չի ծառայել այն նպատակներին, որոնց համար յատկապէս կառուցուել է: Վ. Կ. անցեալ տարի այդ խնդիրը դրել էր Պատգամաւորական Ժողովի առաջ և ստացել նրա հաճութիւնը յարդարելու և յարմարեցնելու որոշ նպատակների. բայց դժբաղդաբար անկարող լինելով 'ի կատար ածել՝ թողեց նմանապէս այս տարուայ:

Վ. Կառավարութիւնը իւր հնգամեայ գործունէութեան շրջանում շատ անգամ է առիթ ունեցել խօսելու վանքի հիմնական նորոգութեան մասին, բայց միայն այս տարի այդ խնդիրը դարձաւ նրա յատուկ և լուրջ խորհրդակցութեան առարկայ և 1913 թուի

ապրիլի 1-ին գումարուած նիստում որոշեց՝ եկեղեցու թէ ներքին և թէ արտաքին նորոգութիւնները հայկական ոճով կատարելու համար՝ հրաւիրել Տփղիսից ս. Էջմիածնի շէնքերի հայկական ոճով կառուցող և նորոգող ճարտարապետներին խորհրդակցելու և ծրագիր կազմել տալու, որպէս զի այդ ընդհանուր ծրագրով մաս-մաս նորոգուի տաճարը մի քանի տարուայ ընթացքում։

Վ. Կառավարութիւնը անցեալ տարի ծրագրել էր ,,Քիստեան'' կոչուած ամբարանոցները քակել և միքանի շէնքերից մէկ կամ երկու ամարանոցային շէնք կառուցանել ազարակի վանքապատկան կալուածում, որ նուիրել է հանգուցեալ Ստեփ. Խաղնադարեանը։ Բայց լսելով վարպետների կարծիքներն ու բացատրութիւնը իւր այս դիտաւորութիւնից յետ կեցաւ, և եկաւ այն եզրակացութեան, որ աւելի օգտակար կլինի այդ շէնքերը կանգուն վիճակի մէջ վաճառել՝ երբ յարմար առիթ ներկայանայ, քան թէ նոցանից նոր շէնքեր կառուցանել։

'Ի վերջոյ Վ. Կ. պարտք է համարում մի քանի խօսք ևս ասել վանքի աղբիւրի շահագործման խնդրի մասին։ Այս առթիւ անցեալ տարուայ տեղեկագրից յայտնի է Պատգամաւորական ընդհանուր Ժողովին, որ Վ. Կառավարութեան և քաղաքային դումայի փոխադարձ համաձայնութեամբ մի պայմանագիր մշակուեցաւ և ստորագրութիւններով վաւերացուեցաւ այն, որի զօրութեամբ քաղաքը պարտաւորւում է աղբիւրի ջուրը քաղաք բերել, եթէ միայն հետազօտութիւնները ցոյց տան, որ վանքի աղբիւրը ընդունակ է օրական 200000 դոյլ ջուր տալու։ Տարուց աւելի է որ կատարւում են հետազօտութիւններ և քաղաքի կողմից նշանակուած յանձնաժողովի դիտողութիւնները հաստատում են, որ աղբիւրը օրական 150000 դոյլից աւելի ջուր է տալիս, բայց մինչև օրս ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չէ ստացել քաղաքի կողմից։

Այս իսկ պատճառով Վ. Կ. գրաւոր դիմումն ուղղեց պ. Քաղաքագլխին իմանալու համար՝ թէ արդեօք քաղաքը մտադիր է ջուրն առնել՝ թէ՞ ոչ, առաջարկելով միանգամայն որ քաղաքը, 'ի դէպ մերժման, ըստ պայմանի աղբիւրը իւր նախկին վիճակին վերածէ և վանքին յանձնէ։

ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ վանական կառավարութեան ներկայ կազմը հաստատուած է իւր պաշտօնի մէջ թեմիս Գերապատիւ Առաջնորդից 1911 թ. եռամեայ ժամանակով և կազմուած է հետևալ անձերից.

1. Տէր-Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց՝ վանահայր և նախագահ՝ Վ. Կ.
2. Շապոշնիկեան Յովհաննէս՝ անդամ Վ. Կ.
3. Դերիշանեան Աբգար՝ անդամ Վ. Կ.
4. Սագիրեան Յովակիմ՝ գանձապահ-անդամ Վ. Կ.
5. Զէօրէքչեան Գէորգ սարկաւագ՝ անդամ Վ. Կ. և գործավար
6. Շապովալեան Մարտիրոս՝ անձնափոխանորդ
7. Ալլահվերդեան Մանուկ՝ հաշուատես
8. Խամբուրեան Յովակիմ՝ »
9. Զաթալբաշեան Սերովբէ՝ »

Նախագահ վանական կառավարութեան՝

Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/31 1922
ԵՐԵՎԱՆ, Մեսրոպյան
Ա. ՄՅԱՍՆԻ-ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Անդամներ Վ. Կ. | Յովհաննէս Շապոշնիկեան
Աբգար Դերիշանեան
Յովակիմ Սագիրեան

Գործավար-անդամ՝ Գէորգ սարկ. Զէօրէքչեան

1006

1006 002 8026

<< Ազգային գրադարան
NL0028026